ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2026 թվականի N 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հոկտեմբերի 30-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 27-Ն հրամանի 13-րդ, 15-րդ, 18-րդ կետերով. ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում 2026 թվականի մարտի 3-ին նշանակել և անցկացնել համայնքային ծառայողների թափուր պաշտոնները համալրելու համար հետևյալ մրցույթները՝ գյուղ Փարաքար, Նաիրի փողոց թիվ 42 հասցեում.

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-12)՝ ժամը 10:00-ին,

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-12)՝ ժամը 12:00-ին,

3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-7)՝ ժամը 13:30-ին,

2. Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմին (Գայանե Մանուկյան)՝ կազմել մրցույթների հայտարարությունների տեքստերը և այն հրապարակել azdarar.am ինտերնետային կայքում:

3.Մրցույթների տեխնիկական սպասարկումն իրականացնելու, Հանձնաժողովի աշխատանքների բնականոն ընթացքը և համապատասխան կարգով սահմանված այլ

դրույթների իրականացումն ապահովելու նպատակով Մրցույթների անցկացման պատասխանատու և համակարգչային աշխատանքների համար լիազորված անձ նշանակել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների և իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Աիդա Սարգսյանին:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ.ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2026 թ. հունվարի 26
գ. Փարաքար